ՄԱՐԻՆԵ ԽԵՄՉՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ ԵՎ ՆՎԻՐԱՏՈՒ ՊԱՌԱՎԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՅԼ ՊԱՏՄԱԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒԹՅԱՄԲ

Հոդվածում քննարկվել է Սյունիք պատմաազգագրական տարածաշրջանի տպագիր հեքիաթների խորհրդատու և նվիրատու պառավը՝ Հայաստանի մյուս տարածաշրջանների հեքիաթների համադրությամբ: Քննարկվել են խորհրդատու և նվիրատու պառավի տիպերը, բացահայտվել են հեքիաթի պառավ գործող անձի դրական և բացասական կողմերը, վեր են հանվել նրա առանձնահատկությունները, ինչպես նաև մյուս տարածաշրջանների հետ տարբերությունները և նմանությունները:

Բանալի բառեր՝ *հեքիաթ, խորհրդատու, նվիրատու, պառավ, անդրաշխարհ, կախարդ, հակահերոս, հոգու վերամարմնավորում, արգելք:*

Ուսումնասիրության համար որպես հիմք ծառայել են հայ ժողովրդական տպագիր հեքիաթները՝ ընդգրկված մատենաշարային (Հայ ժողովրդական հեքիաթներ, Հայ ազգագրություն և բանահյուսություն) ու առանձին ժողովածուներում (Կարս, Մոկս, Ղարադաղ, Արցախ և այլն):

Հայ ժողովրդական հեքիաթներում հանդիպում են խորհրդատու և նվիրատու պառավի հետևյալ տիպերը.

ա) հերոսի պառավ մայր կամ պառավ, որ հանդիպում է հերոսի ճանապարհին և ստանձնում մոր պարտականությունները՝ հանդես գալով որպես մայր,

բ) անդրաշխարհի պառավ,

գ) հերոսի ճանապարհին հանդիպած, անիծող, հյուրընկալած կամ հարևան պառավ,

դ) կախարդ պառավ,

ե) դևի կերպարանք առած կամ դևի կողմից գերեվարված պառավ:

Անդրադառնանք այն պառավներին, ովքեր իրենց դրական կամ բացասական հատկանիշներով հանդերձ՝ դառնում են հեքիաթի հերոսի (հակահերոսի) խորհրդատու և նվիրատու՝ նրա հետագա գործողություններին նպաստելու (խոչընդոտելու) համար: Հարկ է նշել, որ պառավը հեքիաթ մուտք է գործել ժողովրդի առասպելադիցաբանական պատկերացումների արդյունքում: Վլադիմիր Պրոպը, անդրադառնալով հեքիաթում կին-տղամարդ համարժեքին, գտնում է, որ անտառակյաց տղամարդ խորհրդատուն պատմական է, իսկ կինը, պառավը, մայրը, տանտիրուհին, հրաշագործ միջոցների կին նվիրատուն՝ նախապատմական՝չափազանց արխայիկ, սակայն նրանց մնացուկները հայտնաբերվում են ծիսական նյութերում[1]: Հայկական պանթեոնի կին աստվածությունների եռյակը՝ Անահիտ, Աստղիկ, Նանե, իր անմիջական ներգործությունն է ունեցել հեքիաթապատման վրա: Մայր-աստվածուհին գլխավոր

1 **Пропп В.Я.**, Исторические корни волшебной сказки, Москва, «Лабиринт», 2000, с. 88.

կին աստվածությունն է աշխարհի բազմաթիվ ժողովուրդների առասպելաբանության մեջ[1]: Մայր-աստվածուհու առավել արխաիկ ազգագրական օրինակ կարող է ծառայել ավստրալական առասպելաբանության Կունապիպի «մայր պառավը»՝ մայրիշխանության նախամայրը, ով խորհրդանշում է պտղաբեր հողը[2]: Եվ պատահական չէ, որ հայ ժողովրդական որոշ հեքիաթներում խորհրդատու պառավը հերոսին հանդիպում է այգում, դաշտում կամ անտառում: Որպես հայկական հեքիաթի պառավի արքետիպ որոշ առումներով կարող է ծառայել հայոց դիցարանի երրորդ՝ Նանե աստվածուհին, ով համադրված է հունական Աթենաս դիցուհուն՝ իր իմաստությամբ և ռազմի հատկանիշներով[3]: Նանեի պաշտամունքի վրա ազդեցություն է ունեցել նաև Անահիտ մայր աստվածուհու պաշտամունքը, հավանաբար այդ պատճառով էլ իր անունը ստացել է ժողովրդի մեջ ընդունված նան, նանի, նանէ՝ մեծ մորը տրված անվանաձևերից:

Հերոսի խորհրդատու և նվիրատու մայր-պառավը հայ ժողովրդական հեքիաթներում հանդես է գալիս երկու ձևով՝ որպես իրական աշխարհի գործող անձ և որպես հերոսի մեռած մոր հոգին վերամարմնավորած անդրաշխարհի պառավ: Հայաստանի տարբեր տարածաշրջանների, այդ թվում նաև Սյունիքի հեքիաթների մայր պառավի և ընդհանրապես պառավի տարիքային ընդգրկումը (ըստ բանասացների) մեծ է (քառասունհինգ - ինը հարյուր): Տավուշի հեքիաթներից մեկում բանասացն այսպես է ներկայացնում հերոսի մորը և դևին. «...պառավն էլ, դե պառավը վըե՞րն ա, քառասունհինգ-քառասունվեց տարեկան կնիկ ա... դե դև, խու դևը ի՞նչ ա, հսկա մարթիկ են էլի...»[4]: Իսկ Վան-Վասպուրականի հեքիաթներից մեկում ինըհարյուրամյա պառավն է անմահների աշխարհ գնացած և հետ վերադարձած հերոսին խորհուրդ տալիս, թե ինչպես ապացուցի, որ ինքն Արշակ թագավորի տղան է[5]:

Սյունիքի (Մեղրի) «Քառասուն գլխանէ նառադէվը» հեքիաթում պառավ մայրը հերոսին խորհուրդ է տալիս չընտրի հոր մասնագիտությունը՝ որսորդությունը՝ հոր ճակատագրին չարժանանալու համար (հայրը զոհվել էր որսորդության ժամանակ), սակայն մայրը չի կարողանում տղային հետ պահել որսորդությունից, նա որդուն է նվիրում հորից մնացած «մին չախմախլու թիփ-ա-նգ (հրացան), մին ալ մին փուրանուց խանչալ Դաղստանու լազգիների ձիքյավ շինված»[6]: Այս հեքիաթը պատկանում է հայ ժողովրդական այն հեքիաթների շարքին, որոնցում պառավ մայրն, իր որդեսիրական հատկանիշներով հանդերձ, իր կաշին փրկելու համար անցնում է հակահերոսի կողմը և

1 **Рабинович Е.Г**., Богиня-мать, Мифы народов мира, Москва, Изд-во «Советская энциклопедия», 1987, т. I, с. 178-180.

2 **Мелетинский Е.М**., Австралийская мифология, там же, с. 29-32.

3 **Հարությունյան Ս,Բ.,** Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, Երևան, «Մուղնի» հրատ., 2001, էջ 45-46, **Арутюнян С.Б**., Нанэ, МНМ, 1988, т. II, с. 198:

4 «Չոբաշը».- **Խեմչյան Է**., Տավուշ, Հայ ազգագրություն և բանահյուսություն (հետայսու՝ ՀԱԲ), h. 21, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, էջ 77, № 11(11):

5 «Անմախ աշխար».- Հայ ժողովրդական հեքիաթներ (հետայսու՝ ՀԺՀ), h. XIV, Վան-Վասպուրական, կազմող՝ Ղազիյան Ա.Ս., Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 1999, էջ 469-470, № 50:

6 «Քառասուն գլխանէ նառադէվը».- ՀԺՀ, h. VII, Արցախ-Սյունիք, կազմողներ՝ Նազինյան Ա. Մ., Առաքելյան Մ. Ն., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979, էջ 629, № 236:

իր խորհուրդներով օգնում է նրան (այս հեքիաթում՝ նառադևին[1])՝ հարազատ որդուն ոչնչացնելու նպատակով: Ջրի կենսական և ծաղկաբույսերի դարմանող հատկություններն[2] օգնում են վիրավոր դևին բուժվել. պառավը սկզբից խախտում է որդու կողմից դրված արգելքը (հորի մեջ ջուր չլցնել), այնուհետև կարողանում է կատարել հորում բանտարկված նառադէվի խնդրանքը. «Ըռըշկիտ ծաղկանոցամը կարմէր ու կանէնչ ծաղէկնէր կան, ադ՝ուց հէնի քաղէր, հավանգով թակէր, ջըղըցաքարի ծակավը ածեր»[3]: Սյունիքի մեկ այլ՝ «Դ՝ուրվիշին խոխերքը» հեքիաթում հերոսի մայր-պառավը վիշապի հետ է կապվում, տղա ունենում, իր մեծ՝ դերվիշի նվիրած տղային հավատացնում, որ դերվիշն է իր փոքր եղբորը վերադարձրել և փորձում հերոսին վերացնել[4]:

Որոշ հեքիաթներում հերոսի մայր-պառավը հակահերոսի կողմն է անցնում իր կամքով, բուժում է վիրավոր դևին դևի մատնանշած կարմիր սրվակի դեղով և նրա խորհուրդներով փորձում ոչնչացնել հերոսին[5], կամ պարզապես մայրն է ստիպում դևին, որ խորհուրդ տա՝ ինչպես ազատվեն հերոսից[6]:

Հայկական հեքիաթներում քիչ չեն այն պառավները, ովքեր հերոսի՝ դժվարությունները հաղթահարելու ճանապարհին ստանձնում են մայրական պարտականություններ (պառավի մոտ հյուրընկալվելիս, դևի մոտ կամ անդրաշխարհում պառավի երկար կրծքերը ծծելուց հետո, ճակատագրի բերումով այծատեր պառավի մոտ հայտնվելիս և այլն):

Սյունիքի (Գորիս) «Անկինը» հեքիաթում հերոսուհու՝ Անկինի նախանձ քույրերը. «... շատ խային զատեր ին, տրանց աշկը եր չի կալավ, վեր ՝ուրա՝նց կուճը քերը թաքավերի հարթնըն ա տա՝առա՝լ բոլ չի, մհեկ էլ վեսկիքյա՝նքյ՝ուլ տղա յա պերա՝լ: Ընդրանք խոսկընին մին ըրին, Անկինին խոխան պարուրավը տարան թուղեցին հեռու, մին հանդում, էրկու մեծ քարի ղաթում, ՝ուրա՝նք ետ տա՝առա՝ն եկին խուխին տեղը մին շան թուլա տըրա՝ն»[7]: Նորածնին կուրծք տվող այծի պառավ տերը դառնում է նորածնի մայրը և իր իմաստնությամբ և խորհուրդներով օգնում նրան գտնել իր իսկական՝ կարասում բանտարկված մորը և ազատել ժողովրդի պարսավանքներից: Այծատեր պառավը (ՀԺՀ IV, № 45, ՀԺՀ VI, № 23, Ղարադաղ № 21(21) և այլն) սովորաբար երեխա չունի և աստծո կամոք իր այծի միջոցով դառնում է անտառում կամ քարայրում ոչնչացնելու նպատակով թողնված նորածնի խնամակալը, հետագայում՝ նաև խորհրդատուն:

Հայաստանի տարբեր տարածաշրջանների հեքիաթներում (Այրարատ, Ար-

---

1 Նառադևը հավանաբար ուղտի կերպարանքով, գուցե սապատ ունեցող դև է: Սովորաբար հայ ժողովրդական հեքիաթներում դևը լինում է մարդկային կերպարանքով: Նառադևը հանդիպում է բացառապես Սյունիքի հեքիաթներում (մասնավորապես Մեղրիի տարածաշրջան) («Ուսկէ խ՝ունձ՝ուր՝ուն նաղըլը», «Քառասուն գլխանէ նառադէվը», «Նառդան»):

2 Հեքիաթներում ջրի և ծաղկաբույսերի բուժական հատկությունների մասին տե՛ս **Զաքարյան Ե.**, Հիվանդության և բուժման առասպելույթը հայկական հեքիաթներում, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2016, էջ 34-36, **Հայրապետյան Թ.**, Արքետիպային հարակցումները հայկական հրաշապատում հեքիաթներում և վիպապատմական բանահյուսության մեջ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2016, էջ 88:

3 «Քառասուն գլխանէ նառադէվը».- ՀԺՀ, h. VII, էջ 632, № 236:

4 «Դ՝ուրվիշին խոխերքը».- ՀԺՀ, h. VII, էջ 436, № 178:

5 «Մարթակեր ախչիկ».- ՀԺՀ, h. XV, Վան-Վասպուրական, կազմող՝ Սվազլյան Վ.Գ., Երևան, «Ամրոց» հրատ., 1998, էջ 242, № 35:

6 «Չոբաշը».- ՀԱԲ, h. 21, էջ 77, № 11(11):

7 «Անկինը».- ՀԺՀ, h. VII, էջ 498, № 186:

ցախ, Լոռի, Վան-Վասպուրական, Մոկս, Պարսկահայք և այլն)[1] առկա է հերոսի մեռած մոր հոգու վերաբնակեցումը պառավի մեջ և նրա խորհուրդներով միջամտությունը խորթ մոր հալածանքներին դիմագրավելու համար: Այս մոտիվը սերտորեն կապված է կարմիր կովի[2] և անդրաշխարհի պառավի մոտիվների հետ, որոնք կրում են Ասարնե-Թոմփսոն-Ութերի «Հեքիաթների տիպերի միջազգային նշացանկի» ATU 480 և ATU 510A+511 թվահամարները[3]: Պարսկահայքի հեքիաթներից մեկում խորթ մոր պահանջով կարմիր կովը մորթելուց հետո որբ երեխաների խնամքը ստանձնում է քարայրի պառավը՝ ընդհուպ մինչև որբ աղջկան թագավորի տղայի հետ ամուսնացնելը. «Թագավորի տղեն հիրիկուն էկավ, մամեն հէրից էկավ, բերեց ախչիկ զարթըրեց, տվեց, թագավորի տղեն տարավ, տարան, պսակեցին»[4]:

Երբեմն հեքիաթներում հերոսի մոր պարտականություններն է ստանձնում հյուրընկալ պառավը: Հերոսը կամ ինքն է հանդիպում այդ պառավին, կամ նրան պառավի մոտ են ուղղորդում նրա իմաստուն ձին[5] կամ անդրաշխարհային ծագում ունեցող շները[6]: Գորիսում գրառած «Քաջանց թագավորը» հեքիաթում[7] ոսկեմազ հերոսը ոսկեմատ քրոջ հետ նախանձ մորաքույրերի և պառավ տատմերի խարդավանքի արդյունքում հայտնվում է անտառում: Մի կաղ դև նրանց գտնում և հանձնում է Քաջանց թագավորին, սակայն թագավորը նրանց 15 տարի պահելուց հետո, լսելով ժողովրդի գանգատները վնասարար տղայի մասին, կանչում է կաղ դևին և հանձնարարում երեխաներին տանել այնտեղ, որտեղից բերել է: Հետ վերադառնալով՝ երեխաներն իրենց հոր քաղաքում հյուրընկալվում են մի պառավի մոտ, ով իր ունեցած միակ ձին նվիրում է ոսկեմազ տղային, որով նա որսորդություն էր անում և պահում քրոջն ու հյուրընկալ պառավին: Ի հակադրություն այս նվիրատու պառավի՝ խորհրդատու պառավ տատմերը երեխաների մորաքույրերի պահանջով չորս անգամ ներս է թափանցում նվիրատու պառավի տուն. հերոսի քրոջը առաջին անգամ համոզում է, որ իր եղբայրը «յաբու» ձիու փոխարեն պետք է հրեղեն ձի ձեռք բերի, երկրորդ անգամ՝ փղոսկրի հետևից է ուղարկում, երրորդ անգամ՝ չամչրաղի հետևից, չորրորդ անգամ՝ «Սարի Սուլբուլ, Բաղի Բուլբուլ» աղջկա հետևից՝ ամեն անգամ հույս ունենալով, որ հերոսը հետ չի վերադառնա:

Նմանատիպ բազմաթիվ սյուժեներ հանդիպում են Հայաստանի գրեթե բոլոր տարածաշրջաններում: Այդ առումով ուշագրավ է Իջևանի տարածաշրջանում գրառած «Հազարի բըլբուլ» հեքիաթը[8]: Այս հեքիաթում գործում են երեք

1 «Ճշմարտությունը չի կորչի».- ՀԺՀ, h. III, կազմող՝ Նազինյան Ա.Մ., Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1962, էջ 435-441 (հավելված), № 8, «Խորթ ախճըկանը հաքյաթը».- ՀԺՀ, h. VI, Արցախ-Ուտիք, կազմողներ՝Նազինյան Ա.Մ., Սվազլյան Վ.Գ., Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1973, էջ 46-49, № 6, «Թանջյուման խաթուն».- ՀԺՀ, h. XIV, էջ 194-205, № 16, «Պոլոտ կյով».- ՀԺՀ, h. XVII, Մոկս, կազմող՝ Հայրապետյան Թ.Լ., Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012, էջ 149-151, № 18:

2 **Հայրապետյան Թ**., նշվ. աշխ. էջ 216-234:

3 **Uther H-J**., The Types of International Folktales, A Classification and Bibliography, Based on the System of Antti Aarne and Stith Thompson, Part I, Helsinki, 2011, էջ 281, 294-298:

4 «Կարմիր կովի խեքյաթը».- ՀԺՀ, h. XVIII, Պարսկահայք, կազմող՝ Գևորգյան Թ., Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, էջ 54, № 6:

5 «Ջիբրաել-Խըդըր Նաբին».- ՀԺՀ, h. XIV, էջ 20, № 1:

6 «Ջանջիլ կռան».- ՀԺՀ, h. XIV, էջ 136 № 11:

7 «Քաջանց թագավորը».- ՀԺՀ, h. VII, էջ 398-410, № 174:

8 «Հազարի բըլբուլ».- **Խեմչյան Է**., Իջևան (Զորոփոր), ՀԱԲ h. 25, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2008, էջ 30-33, № 2(2):

տիպի պառավ. ա) քարի տակ պատսպարված ճգնավոր պառավ, ով ծովից հանում է արկղի մեջ փակված երեխաներին և աստծո նվիրատվությամբ՝ մանանայով մեծացնում նրանց և ստանձնում մոր պարտականություններ, բ) կախարդ պառավ, ում վարձում են երեխաների նախանձ մորաքույրերը՝ երեխաներին ոչնչացնելու նպատակով, ում խորհուրդներով հերոսը ճանապարհվում է անհնարինը բերելու, գ) կախարդ պառավ, ով գողացել էր «Ուստա Նջարի» գործիքները՝ նրան զրկելով աշխատելու հնարավորությունից: Պառավի այս երրորդ տիպն ունի երկար կրծքեր: Հերոսը իր ճանապարհին հանդիպած ծերունու խորհրդով՝ ծծելով պառավի կրծքերը և ուշադրությունը հրավիրելով այն բանի վրա, որ այդ գործողությունից հետո նա արդեն պառավի որդին է համարվում, կարողանում է փախցնել գողացված գործիքները: Միշտ չէ, որ երկար կրծքերով պառավն աշխատում է խոչընդոտել իր կրծքերը ծծած հերոսի՝ որդեգրի գործողություններին: «Մարթակեր ախչիկ» հեքիաթում պատկերն այլ է. անդրաշխարհի երկար կրծքերով պառավը հերոսին դարձնում է իր փեսան և խորհուրդներով օգնում ոչ միայն ձեռք բերել անմահական խնձորը, ջուրը և ձմերուկը, այլև դրանք փոխելով սովորական խնձորի, ջրի և ձմերուկի հետ՝ կարողանում է վերակենդանացնել խարդավանքի զոհ դարձած հերոսին:

Անդրաշխարհի պառավը Սյունիքի հեքիաթներում հանդես է գալիս տարբեր կերպարանքներով ու գործառույթներով: Դևի կերպարանքով պառավին սպանելուց հետո, հերոսը նրա գրպանում երեսունինը բանալի է գտնում և ազատում պառավի կողմից գերեվարված աղջիկներին ու տալիս իր երեսունինը խորթ եղբայրներին[1]: Մեկ այլ հեքիաթում. «Ըռաչան մին պառավ կնեկ տՀւս եկը, մին փլըստրատին տվող միակ ծերքին: Էս պառավը ծերքին մըհակը պըցըրցրուց, մին էլ քըշուցրուց, թիլսիմ ըրավ, թաքավերին փըսին ՀւրԱն ծիավը քար շինեց»[2]:

Դժվար է ասել, թե անդրաշխարհի պառավը հայկական հեքիաթներում ավելի շատ դրակա՞ն հատկանիշներով է հանդես գալիս, թե՞ բացասական: Առաջին դեպքում պառավի խորհրդով հերոսը բուժում է թռչունի (Զմբուռ ղուշ) ոտքը, որը նրան ի նշան երախտագիտության, լույս աշխարհ է հանում[3], պառավը հերոսին սովորեցնում է՝ ինչպես լույս աշխարհ դուրս գա սև, կարմիր, սպիտակ խոյերի[4], կամ՝ սև, կարմիր, սպիտակ այծերի միջոցով[5] և այլն: Երկրորդ դեպքում՝ ջադու պառավը հերոսին վերացնելու նպատակով խորհուրդ է տալիս դևի մոտից ձեռք բերել հրաշագործ ծառը և ձեռքի երկանքը[6], կախարդ պառավը հերոսուհուն խորհուրդներ է տալիս և նվիրում մի մատանի, որի մի-

1 «Կտրիչ տղան».- ՀԺՀ, հ. VII, էջ 413, № 175:

2 «ԴՀրվիշին խոխերքը».- ՀԺՀ, հ. VII, էջ 439, № 178:

3 «Նաչար-Օղլու հեքիաթը».- ՀԺՀ, հ. I, Այրարատ, կազմող՝ **Նազինյան Ա.Մ.**, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1959, էջ 172, № 10:

4 «Օխթ ախպոր քուրը».- Կարս. հայոց բանահյուսական մշակույթը, կազմողներ՝ **Հարությունյան Ս.Բ., Վարդանյան Ս.Ա., Խեմչյան Է.Հ., Ղռեջյան Լ.Խ., Խեմչյան Մ.Հ.**, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, էջ 92, № 10(10):

5 «Կտրիճ և դև».- ՀԺՀ, հ. XIV, էջ 526, № 61:

6 «Վըսկեքյաքուլ տղան».- **Հովսեփյան Հ.**, Ղարադաղի հայերը, հ. II, Բանահյուսություն, կազմողներ՝ **Վարդանյան Ս.Ա. Խեմչյան Է.Հ.**, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009, էջ 29, № 2(2):

ջոցով նա կորցնում է գիտակցությունը[1], կամ իր կախարդական գիրքը բացում է և հակահերոսին խորհուրդ է տալիս՝ ինչպես գտնի հերոսուհու հոգու տեղը[2] և այլն:

Հարկ է ներկայացնել նաև հայ ժողովրդական հրաշապատում հեքիաթներում հաճախ հանդիպող խնոցի հեծնող պառավին (Խլաթ, Վան-Վասպուրական)[3], ում առաքելությունը հակահերոսին օգնելն է: Սյունիքի հեքիաթներից մեկում նմանատիպ պառավը հերոսի կնոջը փախցնում է՝ նավակերպ արկղի միջոցով հասնելով նրա՝ գետի ափին գտնվող այգին: Պառավին հաջողվում է հարբեցնել նրանց և կնոջը տեղափոխել նավակերպ արկղը[4]:

Պակաս չէ ոչ անդրաշխարհային ծագում ունեցող պառավի դերը հեքիաթի հերոսի գործողությունների զարգացման ընթացքում: Հարևան կամ անիծող պառավ գործող անձը հեքիաթ մուտք է գործում երբեմն հերոսի գործողությունների սկզբնամասում:

Անեծքի հմայական ներգործությամբ հերոսին պատժելու փոխարեն պառավը որոշ հայ ժողովրդական հեքիաթներում հանդես է գալիս որպես նվիրատու և խորհրդատու: Այսպես՝ Սյունիքի «Կտրիչ տղան» հեքիաթում թագավորի փոքր տղան. «...հրըվընններին խուխորցը նհետ խաղ ընելիս տամ ա մըն պըռավի տղի կյէլոխ պուկում: Պառավը կյամ ա լաց ը շիվան անում, թա կյէլոխտ վեղեմ, քու ըրեսնուինը ախպերքը քյացալ են էլրանց հետի կնեկյ ճարեն, պիրեն, տէլ էլ եկալ ես խուխորցը ըսպանո՞ւմ»[5]: Պառավի խորհրդով հերոսը ձեռք է բերում իր հանգուցյալ հոր ձին ու ասպազենը և ճանապարհվում իր խորթ եղբայրների հետքով՝ հարսնացու փնտրելու: Իմաստուն պառավը, իմանալով, որ հերոսին եղբայրներից վնաս կգա, խորհուրդ է տալիս նաև նրանց հետ նույն տեղում չքնել: Կարսի հեքիաթներից մեկում պառավն իր կուժը ջարդող թագավորի տղային անիծում է, որ նա հանդիպի յոթ եղբոր քրոջը և սիրահարվի, որ իմանա աշխարհում ինչ կա[6], փոքր-ինչ տարբեր է արցախյան հեքիաթի անիծող պառավը: Նրա անեծքի արդյունքում չորանում է ժլատ թագավորի այգին: Այդուհանդերձ, պառավն իր խորհուրդներով օգնում է ձեռք բերել այգին վերականգնող Հազարան բլբուլը և վերակենդանացնում թագավորի փոքր տղային[7]:

Սյունիքի «Դէրվիշին խոխերքը» հեքիաթում իր բոստանը մտած հերոսին անիծելով՝ պառավը խորհուրդ է տալիս գնալ կորած հորը փնտրելու և միևնույն ժամանակ ասում, որ մորից խնդրի դերվիշի տված ձին ու ասպազենը[8]: «Օխտը ախպեր, մի քուր» հեքիաթում հարևան պառավը հերոսուհուն խորհուրդ է տալիս լաց լինելու փոխարեն գնա եղբայրներին փնտրելու[9]:

Այսպիսով՝ դիտարկումները ցույց են տալիս, որ Սյունիքի տարածաշր-

1 «Շըղկշըղկան շապիքյ».- Մոկս. հայոց բանահյուսական մշակույթը, կազմողներ՝ **Հարությունյան Ս.Բ., Խեմչյան Է.Հ., Խեմչյան Մ.Հ., Պողոսյան Ա.Կ.**, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015, էջ 33, № 1(1):

2 «Գոլ-Բարին».- ՀԺՀ, հ. XIV, էջ 51, № 2:

3 «Ուստա Մուրատ».- ՀԺՀ, հ. XVI, Վան-Վասպուրական, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009, էջ 40, № 4, «Զէազոն ինան Ա.սմէր».- ՀԺՀ XIV, էջ 425, №46

4 «Հրեղան ծին».- ՀԺՀ, հ. VII, էջ 428-429, № 177:

5 «Կտրիչ տղան».- ՀԺՀ, հ. VII, էջ 411, № 175:

6 «Օխթ ախպոր քուրը».- Կարս., էջ 87, № 10(10):

7 «Հազզարան բըլբէլը».- **Սարգսյան Ա. Յու.**, Արցախի բանահյուսությունը, Երևան, «Էդիտ Պրինտ», 2015, էջ 111-117, № 1(7):

8 «Դերվիշին խոխերքը».- ՀԺՀ, հ. VII, էջ 434, № 178:

9 Օխտը ախպեր, մի քուր».- **Հովսեփյան Հ.**, նշվ. ժողովածու, էջ 138, № 22(22):

ջանի տպագիր հեքիաթների խորհրդատու և նվիրատու պառավն ունի բազմաբնույթ գործառույթներ: Ծնունդ առնելով ժողովրդի առասպելաբանական, դիցաբանական, ծիսական պատկերացումներից՝ պառավը նախ հեքիաթի հերոսի մայրն է կամ հերոսի մեռած մոր վերամարմնավորված հոգին: Մայրպառավը (իրական աշխարհում և անդրաշխարհում) հանդես է գալիս ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմերով՝ իր խորհուրդներով և նվիրատվությամբ նպաստելով կամ խոչընդոտելով հերոսի գործողություններին: Անդրաշխարհի պառավը հանդես է գալիս որպես կապող օղակ հերոսի և անդրաշխարի միջև. հերոսին մատնացույց է անում իրական աշխարհ դուրս գալու ճանապարհը կամ հայտնվում է իրական աշխարհում՝ խորհրդատվությամբ և նվիրատվությամբ օգնելու հերոսին: Կախարդ (դևի կերպարանք առած, ջադու, խնոցի հեծնող) պառավն իր խորհուրդները և նվերները տալիս է հակահերոսին՝ դրանով իսկ խոչընդոտելով հերոսի գործողություններին: Պակաս կարևոր դեր չեն խաղում նաև հյուրընկալ (երբեմն մայրական պարտականությունները ստանձնող), հարևան, անիծող պառավները, որոնց անմիջական միջամտությամբ փոխվում է հերոսի գործողությունների ընթացքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Զաքարյան Ե., Հիվանդության և բուժման առասպելույթը հայկական հեքիաթներում, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2016:

2. Կարս. հայոց բանահյուսական մշակույթը, կազմողներ՝ Հարությունյան Ս.Բ., Վարդանյան Ս.Ա., Խեմչյան Է.Հ., Ղռեջյան Լ.Խ., Խեմչյան Մ.Հ., Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013:

3. Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 21, Տավուշ. կազմող՝ Խեմչյան Է.Հ.,Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000:

4. Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 25, Իջևան (Ձորոփոր). կազմող՝ Խեմչյան Է.Հ.,Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000:

5. Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. I, Այրարատ, կազմող՝ Նազինյան Ա.Մ., Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1959:

6. Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. III, կազմող՝ Նազինյան Ա.Մ., Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1962:

7. Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. VI, Արցախ-Ուտիք, կազմողներ՝Նազինյան Ա.Մ., Սվազլյան Վ.Գ., Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1973:

8. Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. VII, Արցախ-Սյունիք, կազմողներ՝ Նազինյան Ա. Մ., Առաքելյան Մ. Ն., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979:

9. Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. XIV, Վան-Վասպուրական, կազմող՝ Ղազիյան Ա.Ս., Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 1999:

10. Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. XV, Վան-Վասպուրական, կազմող՝ Սվազլյան Վ.Գ., Երևան, «Ամրոց» հրատ., 1998:

11. Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. XVI, Վան-Վասպուրական, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009:

12. Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. XVII, Մոկս, կազմող՝ Հայրապետյան Թ.Լ., Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012:

13. Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. XVIII, Պարսկահայք, կազմող՝ Գևորգյան Թ., Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016:

14. Հայրապետյան Թ., Արքետիպային հարակցումները հայկական հրաշապատում հեքիաթներում և վիպապատմական բանահյուսության մեջ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2016:

15. Հարությունյան Ս,Բ., Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, Երևան, «Մուղնի» հրատ., 2001:

16. Հովսեփյան Հ., Ղարադաղի հայերը, հ. II, Բանահյուսություն, կազմողներ՝ Վարդանյան Ս.Ա. Խեմչյան Է.Հ., Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009:

17. Մոկս. հայոց բանահյուսական մշակույթը, կազմողներ՝ Հարությունյան Ս.Բ., Խեմչյան Է.Հ., Խեմչյան Մ.Հ., Պողոսյան Ա.Կ., Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015:

18. Սարգսյան Ա. Յու., Արցախի բանահյուսությունը, Երևան, «Էդիտ Պրինտ», 2015:

19. Мифы народов мира, Москва, Изд-во «Советская энциклопедия», 1987, т. I.

20. Мифы народов мира, Москва, Изд-во «Советская энциклопедия», 1988, т. II.

21. Пропп В.Я., Исторические корни волшебной сказки, Москва, «Лабиринт», 2000.

22. Uther H-J., The Types of International Folktales, A Classification and Bibliography, Based on the System of Antti Aarne and Stith Thompson, Part I, Helsinki, 2011.

СТАРУХА-СОВЕТНИК И СТАРУХА-ДАРИТЕЛЬ СЮНИКСКИХ СКАЗОК, В СОПОСТАВЛЕНИИ СО СКАЗКАМИ ДРУГИХ ИСТОРИКО-ЭТНИЧЕСКИХ РЕГИОНОВ АРМЕНИИ - МАРИНЕ ХЕМЧЯН - Наблюдения показывают, что старуха-советник и старуха-даритель отпечатанных сказок Сюникского региона имеют разнохарактерные функции. Исходя из мифологических, религиозных и ритуальных представлений, старуха - в первую очередь мать героя сказки или перевоплащающаяся душа его умершей матери. Старуха-мать (в реальном, также в потусторонном мире) выступает как положителными, так и отрицатвльными чертами, своими советами и дарами содействуя или препятствуя действиям героя сказки. Старуха подгробного мира выступает как связывающее звено между героем сказки и потустороннем миром: герою указывает путь реального мира или появляется там, чтобы помочь герою своим советом и даром. Старуха-колдунья (в облике дэва, ведьма, верхом на хноци (бочёнок для пахтания) свои советы и дары дает антогонисту, этим препятствуя действиям героя сказки. Не в меньшей степени важную роль играют и гостеприимные (иногда принимающие материнские обязанности), соседские и проклинающие старухи, непосредственным вмешательством которых изменяется ход действий героя.

Ключевые слова: сказка, советник, даритель, старуха, потусторонный мир, колдунья, антогонист, перевосплощение души, табу.

OLD ADVISOR WOMAN AND OLD DONOR WOMAN OF THE SYUNIK TALES, IN COMPARISON WITH THE TALES OF OTHER HISTORICAL AND ETHNICAL REGIONS OF ARMENIA - MARINE KHEMCHYAN - Observations show that the advisor and donor old woman of the printed tales of the Syunik region has multiple functions. Based on mythological, religious and ritual representations, first of all the old woman is the mother of the main character of the fairy tale or the reincarnated soul of his deceased mother. The old mother (in the real world, as well as in the underworld) acts both positively and negatively, assisting or hampering the actions of the character with her advice and gifts. The old woman of the underworld acts as a link between the character and the underworld: indicating the path for the character out to the real world or appearing there to assist the character with her advice and gift. An old witch-woman (as a deamon, a witch, riding the churn) gives her advice and gifts to the antagonist, thereby hampering the actions of the character. A role no less important is played by hospitable (sometimes taking maternal duties), neighborly and cursing old women, whose direct intervention changes the course of the character´s actions.

Keywords: tale, adviser, donor, old woman, underworld, witch, antagonist, sout reincarnation, hamper